ԳՐԵՏԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ մանկավարժության
տեսության և պատմության ամբիոնի դոցենտ,
մանկավարժական գիտությունների թեկնածու
ՀՏԴ 37.0

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԾԱԳԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Բանալի բառեր և արտահայտություններ. մանկավարժական իրավիճակների դասակարգում, մանկավարժական խնդիր, ռեֆլեքսիա, իրավիճակի մոդելավորում, մանկավարժական խնդրի ձևակերպում, մանկավարժական խնդրի լուծման փուլեր:

Ключевые слова и выражения: классификация педагогических ситуации, педагогическая задача, рефлексия, моделирование ситуации, формулировка педагогической задачи, этапы решения педагогической задачи.

Keywords and expressions: classification of pedagogical situations, pedagogical problem, reflection, situation modelling, formation of a pedagogical task, phases of solving a pedagogical problem.

Մանկավարժական իրավիճակը կրթական գործընթացի բաղադրիչ է, որը ներառում է ուսումնական և արտաուսումնական ժամանակահատվածում աշակերտների, աշակերտի և ուսուցչի կամ կրթական հաստատության կառավարման ենթահամակարգերի այլ ներկայացուցիչների, ինչպես նաև ուսուցչի և ծնողի/ծնողների միջև ի հայտ եկած կենսական հանգամանքներ, իրավիճակներ, դեպքեր, երևույթներ, իրադարձություններ, պատմություններ, հարաբերություններ, փաստեր: Իրավիճակները դասակարգվում են ըստ տեղի և ընթացքի, բնույթի (կանխամտածված ստեղծված, տարերային, բնական, միօրինակ, ոչ միօրինակ, ինքնատիպ և այլն), կառավարման աստիճանի (կառավարվող, չկառավարվող), մասնակիցների (աշակերտ-աշակերտ, աշակերտ-ուսուցիչ և այլն), հակասությունների բնույթի (բախումնային, ոչ բախումնային), բովանդակության (ուսումնական, դաստիարակչական, առարկայական և այլն):

Մանկավարժական իրավիճակի էությունը նրանում առկա հակասություններն են, դրանց զարգացման բնույթն ու լուծումը: Կարելի է ասել, որ մանկավարժական գործընթացը միմյանց փոխկապված մանկավարժական այնպիսի իրավիճակների անընդմեջ շղթա է, որոնք ինքնաբուխ դրսևորվում են ուսումնական գործընթացի սուբյեկտների փոխհարաբերություններում: Մանկավարժական իրավիճակի կառուցվածքը ներառում է այդ սուբյեկտների իմացական-հուզական փոխազդեցությունը:

Մանկավարժական իրավիճակներում ծագում են լուծում պահանջող խնդիրներ: Ըստ էության մանկավարժական խնդիրներ կարելի է համարել նաև այն դեպքերը, երբ աշակերտները դժվարությամբ են հաղորդակցվում, միջանձնային հարաբերություններ ձևավորում, հաշվի չեն առնվում նրանց իրական կարողությունները, և մանկավարժական խնդիր են դառնում սովորողի մեկուսացումը շրջապատից, սոցիալական նոր դերին հարմարման, աշակերտական կոլեկտիվում ինտեգրման, ինքնահաստատման ու ինքնադրսևորման դժվարությունները, նրա կարողությունների դրսևորման համար ոչ համարժեք մանկավարժական մոտեցումները և այլն:

Մանկավարժական խնդրի գիտակցման, գնահատման ու լուծման ընթացքում դրսևորվում են ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաները: Խնդրի լուծման ժամանակ անհրաժեշտ է բացահայտել փաստը, մանկավարժի կամ աշակերտների գործողությունների, վարքի դրդապատճառները, մանկավարժական տվյալ իրավիճակից ելքի ուղիներ նշել և գտնել տվյալ խնդրի լուծման առավել ճիշտ տարբերակը: Հաճախ մանկավարժական իրավիճակների լուծման գործընթացում անհրաժեշտ է լինում կիրառել զգայական-պերցեպտիվ և խոսքային-տրամաբանական կառույցները[1]: Մանկավարժական իրավիճակի հայտնաբերման և ծագած խնդրի արդյունավետ լուծման գործում կարևոր են խնդիրը լուծող սուբյեկտի անձնային և մասնագիտական որակները, հոգեբանամանկավարժական գիտելիքները, փորձը, մանկավարժական տակտը: Մանկավարժական վարպետության բաղադրիչներին տիրապետող հմուտ ուսուցիչը կարողանում է ելք գտնել դժվար, անկանխատեսելի իրավիճակից՝ արագ գնահատելով այն: Հատկապես տիրապետելով հաղորդակցման խոսքային, ոչխոսքային միջոցներին՝ նա կարողանում է հոգեբանամանկավարժական ներգործություն ունենալ աշակերտների վրա՝ ձևավորելով միջանձնային ճիշտ հարաբերություններ:

Մանկավարժական իրավիճակում ծագած խնդրի լուծման տեխնոլոգիաները ներառում են խնդրի լուծման փուլերը, մանկավարժական միջոցները, ձևերը, հնարները, եղանակները, մեթոդները, այսինքն՝ *կազմակերպական-մեթոդական միջոցների ամբողջությունը*: Առաջարկվում են խնդրի լուծման հետևյալ հաջորդական փուլերը.

- ✓ իրավիճակի մոդելավորումը,բովանդակությունն ու նկարագրությունը, նրանում առկա մանկավարժական փաստը,
- ✓ մանկավարժական խնդրի ձևակերպումն ու առաջադրումը,
- ✓ վերլուծությունն ու կոնֆլիկտի բովանդակության մեկնաբանումը,

[1] Кашапов М. М. Теория и практика решения педагогической ситуации. -Ярославль: Яросл. гос. ун-т. 1997. -100 с., стр. 11:

- ✓ խնդրի լուծման տեխնոլոգիայի ընտրությունը՝ տեսական և գործնական գիտելիքների կիրառմամբ,
- ✓ խնդրի լուծումը, արդյունավետության գնահատումն ու ռեֆլեքսիան:

Կարևոր է, թե ուսուցիչն իր գիտելիքները, փորձն ինչպես է ծառայեցնում տվյալ իրավիճակը գնահատելու, որոշումներ ընդունելու և լուծման ուղիներ գտնելու համար: Երբեմն արդյունավետ լուծում գտնելու համար հարկ է լինում հանդիպումներ ունենալ, զրուցել և խորհրդակցել դպրոցի տնօրինության, կառավարման ենթահամակարգերի ներկայացուցիչների, այլ ուսուցիչների, դասղեկների, աշակերտների, նրանց ծնողների, տարբեր կառույցների ներկայացուցիչների հետ: Քանի որ տարիքային յուրաքանչյուր փուլում դրսևորվում են որոշակի իրավիճակներ և դրանցից բխող խնդիրներ, ուստի իրավիճակների վերլուծության ընթացքում պետք է խորապես հաշվի առնել տարիքային տվյալ կենսափուլին բնորոշ հոգեբանական, կազմաբնախոսական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Այսպես, օրինակ, կրտսեր դպրոցական տարիքում իրավիճակները կարող են ի հայտ գալ երեխայի դպրոցամուտի հետ կապված նոր պայմանների, ռեժիմի, ուսուցչի, դասընկերների հետ ձևավորվող փոխհարաբերությունների, ուսումնական նյութի յուրացման հետ կապված դժվարությունների հետ: Կապված կենսական նոր պայմաններին և սոցիալական նոր դերին հարմարման հետ՝ կրտսեր դպրոցականները շուտ են հոգնում, հուզվում, դասերի ժամանակ հիշում են ծնողներին, չեն կարողանում կենտրոնանալ ուսումնական աշխատանքում, ձանձրանում են, անվստահ են սեփական ուժերի նկատմամբ, զգայուն ու շուտ տպավորվող են: Սոցիալական փորձի ոչ բավարար չափով ձևավորվածության հետ կապված՝ միջանձնային հարաբերություններ ձևավորելիս ճկուն չեն, դժվարանում են շրջապատում համարժեք վարք դրսևորել, դառնում են գրգռված, ագրեսիվ կամ, ընդհակառակը, չհաղորդակցվող, նեղացկոտ և այլն: Դեռահասության տարիքում, կապված ներզատիչ և աճեցողական համակարգերի բուռն գործունեության և հասունացման հետ, ի հայտ են գալիս վարքի և գործունեության նոր ձևեր: Դեռահասը փորձում է ինքնահաստատվել, դառնում է ավելի ինքնուրույն, որն էլ հաճախ դասընկերների և ուսուցիչների հետ բախումնային հարաբերություններ է ձևավորում: Ավագ դպրոցականի մեջ մեծ են ինքնորոշման, ինքնահաստատման ձգտումը, սեփական անձի նկատմամբ հարգանքը, ձևավորված կայուն դիրքորոշումները, ինչպես նաև պարտադրված արժեքների նկատմամբ անհանդուրժողականությունը: Ցածր ինքնագնահատականը, անօգնականության զգացումը, ապագայի նկատմամբ անորոշությունը կարող են պատանուն դարձնել դյուրագրգիռ, բախումնային, չհաղորդակցվող, ինքնամփոփ: Տարիքային տարբեր փուլերին բնորոշ նշված առանձնահատկություններն ուսումնադաստիարակչական տարբեր իրավիճակներում կարող են դրսևորվել լիովին կամ մասնակի: Մանկավարժական իրավիճակներին համարժեք անդրադարձը, դրանց ճիշտ, մանկավարժական

տեսանկյունից նպատակահարմար գնահատումն ու ծագած խնդիրների լուծումը կարևոր ներգործություն ունեն սովորողի կյանքի, միջանձնային հարաբերությունների, վարքի, կենսական դիրքորոշումների ձևավորման վրա և խոր հետք են թողնում ամբողջ կյանքի ընթացքում: Կարևոր են մանկավարժի հաղորդակցական կոմպետենցիաները տակտը, նրբանկատությունը: Մանկավարժական իրավիճակներում ի հայտ եկած խնդիրների լուծման ընթացքում հարկ է հաշվի առնել մի շարք սկզբունքներ և մոտեցումներ՝ երեխայի անհատական-հոգեբանական առանձնահատկությունների հաշվառումը, ընտանեկան պայմանները, տարածաշրջանային և էթնիկ առանձնահատկություններն ու գործոնները, երկխոսությունը ցանկացած իրավիճակում, իրավիճակին հանգամանալից ծանոթացումն ու փաստերի բազմատեսանկյուն վերլուծությունը, խնդրի գիտակցումը: Հարկ է դրսևորել անձնա-կենտրոն մոտեցում, խուսափել կոշտ դիտողություններից, իրավիճակն անհարկի սրելուց, դրսևորել հանդուրժողականություն, աշակերտին չպիտակավորել, անձը չվիրավորել, դրսևորել մարդասիրական որակներ, մանկավարժական տակտ:

Իրավիճակներ և դրանցում ծագած խնդիրների լուծման օրինակներ

Վեցերորդ դասարանի աշակերտ Ա.-ն ակտիվ, աշխույժ, շարժուն տղա է. դասի ընթացքում չի կարողանում հանգիստ նստել, չի համբերում, անընդհատ ձեռք է բարձրացնում: Ընդունակ է, տրամաբանող. դասը միշտ սովորում է, ցանկանում է պատասխանել, արժանանալ ուսուցչի գովեստին: Սակայն ուսուցչուհին նյարդայնանում է նրա շարժունությունից, ակտիվությունից: Դիտողությունները տղայի վրա չեն ազդում, ծնողների հետ զրուցելն էլ արդյունք չի տալիս. հայրն արտագնա աշխատանքի է, մայրը՝ հիվանդ. տղային հիմնականում տատիկն է խնամում: Ուսուցչուհին նույնիսկ դիմեց տնօրենին՝ տղային զուգահեռ դասարան տեղափոխելու խնդրանքով:

<u>Խնդրի գիտակցում և ձևակերպում</u>. 10-11 տարեկան հասակում սկսվում է դեռահասության կենսափուլը, որը բժշկական և մանկավարժական պրակտիկայում հայտնի է որպես պուբերտատային ճգնաժամ և առանձնանում է կազմաբնախոսական ու նյարդահոգեբանական մի շարք փոփոխություններով: Կապված ներզատիչ /էնդոկրին/ և աճեցողական /վեգետատիվ/ համակարգերի բուռն գործունեության հետ՝ դեռահասի մեջ ի հայտ են գալիս էներգետիկ մեծ հնարավորություններ, որոնք արտահայտվում են դեռահասի ոչ միայն արտաքինում, այլև միջանձնային հարաբերություններում, վարքագծում և դրսևորվում են որպես ակտիվություն, եռանդունություն, շարժունություն, կամակորություն, կռվարարություն, անհնազանդություն, դյուրագրգռություն: Հաճախ դեռահասները չեն զգում իրենց աղմկարարությունը, բարձր խոսելը, անզուսպ ծիծաղելը, անկառավարելի շարժունությունը, հախուռն շարժուձևը, որը

նյարդայնացնում է ուսուցչին: Հատկապես երբ դասը հանդարտ, լուռ, միապաղաղ է ընթանում, երբ չկան հետաքրքրություն, բուռն քննարկումներ, հանձնարարված գրավիչ աշխատանք, մտքերի ազատ արտահայտում, ի հայտ են գալիս կարգապահական խախտումներ: Դեռահասներն աննշան առիթով միմյանց են քաշքշում, խոսում, ծիծաղում կամ անհամբերությամբ փորձում են իրենց սովորածն արտահայտել, խոսել, դասի ընթացքին սրություն հաղորդել ՝ առանց սպասելու ուսուցչի հարցմանը:

Վերլուծությունն ու կոնֆլիկտի բովանդակության մեկնաբանումը. Կոնֆլիկտն արտահայտվում է ակտիվ, շարժուն աշակերտի նկատմամբ ուսուցչի անհանդուրժողական վերաբերմունքի մեջ. նույնիսկ եթե աշակերտն ընդունակ է ու տիրապետում է ուսումնական նյութին, դա ևս ուսուցչին նյարդայնացնում է, որովհետև աշակերտի այդօրինակ պահվածքը կարող է դասարանում կարգապահության խախտման առիթ դառնալ, և ուսուցիչը, չկարողանալով կառավարել իրավիճակը, հաճախ կորցնում է ինքնատիրապետումը:

Խնդրի լուծման ուղիներ և մեթոդներ. Ընտանեկան բարդ հանգամանքների պատճառով ուսուցիչը, բնականաբար, չի կարող լիարժեքորեն համագործակցել ընտանիքի հետ, ուստի պետք է իրավիճակը հարթի դպրոցում: Նպատակահարմար է, հաշվի առնելով աշակերտի տարիքային-հոգեբանական և անհատական առանձնահատկությունները, ակտիվությունը, հաղորդակցման ճկուն ոճ, մանկավարժական տակտ դրսևորելով՝ նրան ներգրավել անհատական և խմբային տարաբնույթ աշխատանքներում՝ ուսումնահետազոտական պարզ առաջադրանքներ, խաղային իրավիճակներ, անհատական հանձնարարություններ, կիրառել խրախուսական հնարներ, օրինակ՝ ուսուցչի օգնականի պատասխանատու դեր հանձնարարել և այլն: Աստիճանաբար աշակերտին մղելով տարբեր աշխատանքների, դասագործընթացում ակտիվորեն ներգրավելով և ուղղորդելով նրա ինքնաբուխ դրսևորումները՝ հնարավոր է վերահսկել, կարգավորել աշակերտի գործողությունները և ստանալ ցանկալի արդյունք:

Քիմիայի նորավարտ ուսուցչուհի Ս. Ա.-ն պատրաստվում է 11-րդ դասարանում իր առաջին դասին՝ փոխարինելով նախկին ուսուցչին: Զանգը տալուն պես նա շտապում է դասարան, սակայն միջանցքում նրա կողքով ցուցադրաբար հեռանում է ամբողջ դասարանը՝ բացի հինգ աշակերտից:

- *Դուք ինչու± չեք գնացել, - հարցնում է վերջիններիս ուսուցչուհին:*
- *Մենք համաձայն չենք նրանց հետ, - պատասխանում են աշակերտները:*

Խնդրի գիտակցում և ձևակերպում. Նորավարտ ուսուցչուհին կանգնած է մանկավարժական լուրջ խնդրի առջև, որից կախված են նրա հետագա գործունեության հաջողությունը, հեղինակությունն ու վարկանիշը: Նա պետք է աշակերտների մեջ վստահություն, ուսումնական կայուն դրդապատճառներ

ձևավորի՝ միաժամանակ առաջին իսկ օրվանից լարվածություն չստեղծելով և տվյալ իրավիճակի լուծման ընթացքում իր անզորությունը չարտահայտելով:

Խնդրի լուծման ուղիներ և մեթոդներ. Ուսուցչուհին նախևառաջ պետք է փորձի հաղորդակցվել դասարանում մնացած աշակերտների հետ՝ չդժգոհելով, թե մի քանի աշակերտի հետ պետք է պարապի ամբողջ դասի ընթացքում: Ընդհակառակը, նա պետք է այնքան հետաքրքիր անցկացնի դասը, անձնային և մասնագիտական այնպիսի որակներ դրսևորի, որպեսզի դասին մասնակցած աշակերտներն իրենց դասընկերիներին պատմեն նոր ուսուցչուհու դրական հատկանիշների մասին: Ըստ էության կարիք չկա մեծ աղմուկ բարձրացնել աշակերտների փախուստի վերաբերյալ՝ նրանց շրջանում անզոր և թույլ մարդու տպավորություն չթողնելու համար, կարելի է տնօրինությանը տեղյակ պահել, բայց և այնպես խնդրել հնարավորություն տալ աշակերտներին ապացուցելու, որ իրենք սխալվել են, և դա այլևս չի կրկնվի:

Հինգերորդ դասարանում հայրենագիտության դաս է: Աշակերտուհի Վ.-ն դաս է պատասխանում: Երբ աշակերտուհու խոսքը դանդաղում է, նա տեղ-տեղ կանգնում է, բոլորն անմիջապես ձեռք են բարձրացնում, անհամբերները՝ նույնիսկ երկու ձեռքը. շատ են ուզում, որպեսզի ուսուցչուհին տեսնի, գնահատի իրենց գիտելիքները, ուշադրությունն ու ակտիվությունը: Սկզբում ուսուցչուհին դիմադրում է նրանց ցանկությանը, սակայն աստիճանաբար տեղի է տալիս և ամենաանհամբերներին հնարավորություն է տալիս լրացնելու դաս պատասխանող աղջկա պատասխանը: Այժմ Վ.-ն ոչ միայն պատասխանում է, այլև հետևում է դասարանում կատարվող իրարանցմանը, փորձում է հակազդել, ավելի ու ավելի է շփոթվում, հուզվում և վերջնականապես լռում է:

-Դու լավ էիր սկսել, ինչու± լռեցիր, էլի± դասը լավ չես սովորել,- հանդիմանում է ուսուցչուհին՝ հերթական ցածր գնահատականը նշանակելով դասամատյանում:

Խնդրի գիտակցում և ձևակերպում. Փաստ է, որ նույն դասարանում կան մտագործունեության տարբեր արագություն ունեցող աշակերտներ. ոմանք արագ են մտածում և արտահայտվում, ոմանք՝ դանդաղ: Այստեղ տեղին է հիշել Հովարդ Գարդների բազմաբնույթ մտածողության տեսությունը, ըստ որի՝ չի կարելի հավասարության նշան դնել մտածողության և գիտելիքի միջև. մարդը գիտելիքներ ձեռք է բերում ամբողջ կյանքի ընթացքում, սակայն մտածողության այս կամ այն տեսակով օժտված է լինում ի ծնե: Դա մարդու մտածելու կերպն է, ձևը, որն իր հերթին կարելի է մշակել, զարգացնել կյանքի ընթացքում: Հ. Գարդներն առանձնացրել է մտածողության յոթ տեսակ՝ խոսքային-լեզվական,

տրամաբանական-մաթեմատիկական, տարածական-տեսողական, երաժշտական, մարմնաշարժողական, ներանձնային, միջանձնային[2]: Պետք է որոշ չափով ճանաչել աշակերտի մտածողության տեսակը և հասկանալ, թե ուսումնական նյութը վերարտադրելիս նա ինչպես է մտածում և ըստ այդմ արտահայտվում:

Վերլուծությունն ու կոնֆլիկտի բովանդակության մեկնաբանումը. Ըստ էության ուսուցիչը բավականաչափ կարևորություն չի տալիս աշակերտի մտագործունեության ճկունությանը, արագությանը, մտածողության տեսակին և փորձում է արագացնել հարցման տևողությունը՝ նրան ամենևին հնարավորություն չտալով հանգիստ մտածել, արտահայտվել, դրսևորել իր գիտելիքները, մշակել պատասխանը, կշռադատել, կառուցել խոսքը: Այսօրինակ իրավիճակներում, փորձելով արագացնել դասի տեմպը, ժամանակ չկորցնելու համար դրսևորելով անհամբերություն, տեղի տալով որոշ աշակերտների ակտիվությանը, ուսուցիչն անմիջապես դիմում է նրանց օգնությանը: Արդյունքում որոշ աշակերտներ խուսափում կամ հրաժարվում են դաս պատասխանելուց, նույնիսկ եթե լավ են սովորել դասը, դառնում են կաշկանդված, անտարբեր: Նրանց համար վիրավորական է շարունակ լսել ուսուցչի հանդիմանանքը և իրենց խոսքն արագացնելու միտումը:

Խնդրի լուծման ուղիներ և մեթոդներ. Անձնակենտրոն մոտեցման հիմնադրույթներում առանցքային է ուսուցումը դարձնել հետաքրքրիր, ձևավորել դրական շարժառիթներ, սովորողին հնարավորություն տալ մտածելու և սովորելու բազմաբնույթ ճանապարհներով, յուրացնելու ուսումնական նյութն իր համար առավել հարմար եղանակով, բոլորի համար ստեղծել հարմարավետ, մատչելի և բարենպաստ ուսումնական պայմաններ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի մտածողության առանձնահատկությունները, տրամաբանական գործընթացների արագությունը, զարգացնել սովորողների վերլուծական միտքը և ստեղծագործական մտածողությունը՝ առավելագույնս դրսևորելու հոգեմտավոր կարողությունները: Դասագործընթացում աշակերտի մտագործունեության ակտիվացման լայն հնարավորություններ են ընձեռում ինտերակտիվ ուսուցումը, անհատական և խմբային ուսումնահետազոտական աշխատանքներն ու դրանց արդյունքների ներկայացումը, զույգերով աշխատանքը, բանավեճի տարրերով զրույցն ու դասանյութի ստեղծագործաբար վերարտադրումը, աշակերտի մտածողությունը հաշվի առնելով՝ տարաբնույթ հանձնարարությունները, որոնք նա կարող է իր անհատական տեմպով կատարել և ներկայացնել /նկարել, շարադրել,

[2] Howard Gardner. Frames of mind: the theory of multiple intelligences, New York: Basic Books. 2011.

պատրաստել տարբեր նյութերով, համակարգչային ծրագրերով ներկայացնել և այլն/:

Այսպիսով՝ մանկավարժական յուրաքանչյուր իրավիճակ պրոբլեմային բնույթ ունեցող ինքնատիպ պատմություն է. նրանում ծագած խնդրի լուծումը բազմափուլ գործընթաց է, որի հաջորդական փուլերն են պրոբլեմահարույց իրավիճակի վերլուծությունն ու խնդրի գիտակցումը, առաջացման պատճառների բացահայտումը, իրավիճակին առնչվող սուբյեկտների գործողությունների վերլուծությունը, խնդրի լուծման համար անհրաժեշտ ռեսուրսների գնահատումը, լուծման տեխնոլոգիայի ընտրությունը:

Գ. Հակոբյան

Մանկավարժական իրավիճակներում ծագած խնդիրների լուծման տեխնոլոգիաները

Ամփոփում

Հոդվածում դիտարկված են մանկավարժական իրավիճակների դասակարգման, այդ իրավիճակներում ծագած խնդիրների ու դրանց լուծման վերաբերյալ հարցեր: Բնութագրված են մանկավարժական իրավիճակի լուծման փուլերը: Ներկայացված են մանկավարժական իրավիճակներ և դրանցում ծագած խնդիրների լուծման օրինակներ:

Г. Акопян

Технологии решения задач возникших в педагогических ситуациях.

Резюме

В статье рассмотрены вопросы, касающиеся классификации педагогических ситуации, решении задач, возникших в этих ситуациях. Характеризованы этапы решения педагогической ситуации. Представлены примеры педагогических ситуации и решении задач, возникших в них.

G. Hakobyan

Technologies for Solving Problems in Pedagogical Situations

Summary

The article deals with issues related to the classification of pedagogical situations, problems arising in those situations and their solutions. The phases of a solution toa pedagogical situation have been characterised. Pedagogical situations and examples of solutions to problems in those situations have been presented.